Հաստատված է 03.11.2023թ.
Գավառի N5 հիմնական դպրոցի տնօրեն՝
/Ա.Ռ. Վարդանյան/

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ

Թեմա՝ Ուշ բրոնզե դարը Հայկական լեռնաշխարհում

Ուսուցչուհի՝ Հ. Մովսիսյան

2023-2024

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

VIIդասարանում «Հայոցպատմություն» առարկայից իրականացվեց նախագծայինաշխատանք «Ուշ բրոնզե դարը Հայկական լեռնաշխարհում» թեմայով: Նախագծային աշխատանքն իրականացրին 7 աշակերտ՝

1. Արման Աղեկյան
2. Մացակ Բլդեյան
3. Դավիթ Գոզեյան
4. Ֆելիքս Հովհաննիսյան
5. Տիգրան Մխիթարյան
6. Սուրեն Կարեյան
7. Աշոտ Օհանյան

Ուսումնական նախագիծը մոնոառարկայական է, միջնաժամկետ՝ 4 շաբաթ տևողությամբ (հոկտեմբերի 4-ից նոյեմբերի 1-ը), ձևաչափը՝ թիմային։Այն իրականացվեց 3 փուլով՝ նախապատրաստում, ընթացք և ամփոփում: Նախապատրաստական փուլում սովորողներն ընտրեցին թեման և սահմանեցին նպատակը։ Թեմայի ընտրության հարցում նրանք ակտիվ մասնակցություն դրսևորեցին, այնուհետև ձևակերպեցին հիմնախնդիրը, որի շուրջ պետք է կատարվեր նախագծի հետազոտությունը։ Ձևավորվեցին 2 աշխատանքային խմբեր։
1-ին խումբն այցելելու էր Գավառի երկրագիտական թանգարան, իսկ 2-րդ խումբը կատարելու էր հետազոտական աշխատանք, պրպտումներ, դիտարկելու էր տեղեկատվական հղումները։ Աշխատանքի բաժանումը կատարելիս հաշվի է առնվել խմբերում ընդգրկված յուրաքանչյուր սովորողի հետաքրքրություններն ու կարողությունները։
2-րդ փուլը՝ նախագծային աշխատանքի տեսական մասի կատարումն էր և տեղեկատվության որոնումը, որի շրջանակներում 1-ին խումբը այցելեց Գավառի երկրագիտական թանգարան, որտեղ պահպանվում են ուշբրոնզեդարյան նմուշներ, որոնք հայտնաբերվել են Գեղարքունիքի տարածքում։ Սովորողները էքսկուրսավարի օգնությամբ ծանոթացան նմուշներին, լուսանկարեցին դրանք։ 2-րդ խումբը համացանցից, համապատասխան գրականությունից նյութեր և տեղեկություններ հավաքեց։ Հետազոտական աշխատանքի ուսումնասիրումը, տեղեկատվության հավաքումը հիմնականում իրականացվում էր ոչ էական թերություններով, հանդիպումների ընթացքում կատարվում էր շտկումներ։
3-րդ՝ վերջնական արդյունքների ներկայացման փուլում ամբողջովին վերանայվեցին հավաքած նյութերը և տեղեկությունները։ Աշխատանքները բերվեցին վերջնական տեսքի և պատրաստվեցին աշխատանքի պաշտպանության սահիկաշարի և գրքույկի

տեսքով: Ստեղծված գրքույկներից մեկը սովորողները նվիրեցին դպրոցին,իսկ մյուսը՝ Գավառի երկրագիտական թանգարանին:

Աշխատանքի ընթացքում սովորողները ցուցաբերեցին ակտիվություն, նախաձեռնողականություն: Նրանք հիմնականում աշխատեցին ինքնուրույն, դրսևորեցին համագործակցային հմտություններ: Աշխատանքի բովանդակությունը համապատասխանում է թեմային, այն ամբողջական է, պահպանված է տրամաբանական կապերը:

Աշխատանքի ընթացքում զարգացան սովորողների ինքնքճանաչողական և սոցիալական, լեզվական գրագիտության, մշակութային, թվային ու մեդիա կարողունակությունները:

Նախագծի նպատակը իրատեսական է, չափելի և սովորողների հետ միասին հասանք մեր նպատակին, այն է՝ ճանաչել Հայկական լեռնաշխարհում, հատկապես Գեղարքունիքի մարզում գտնվող ուշբրոնզեդարյան պատմամշակութային հուշարձանները և գնահատել, արժևորել դրանք:

Յոթ սովորողներն էլ գնահատվեցին 10 միավորանոց համակարգով:

Մխիթարյան Տիգրանը և Աղեկյան Արմանը գնահատվեցին <<9>> միավոր: Նրանք թեմայի ընտրության հարցում ցուցաբերեցին նախաձեռնողականություն, լիարժեք ընկալեցին իրենց դերն ու առաջադրանքը: Սովորողները դրսևորեցին համագործակցության բարձր մակարդակ՝ խմբում հաջողության հասնելու համար: Ճիշտ օգտագործեցին ժամանակը: Աղբյուրների ուսումնասիրությունը և հավաքագրումը իրականացրին ամբողջությամբ, աշխատանքը մշակեցին, որի բովանդակությունը համապատասխանում է թեմային: Աշխատանքի ներկայացման ձևը ընտրեցին ինքնուրույն, միայն սահիկաշարը պատրաստելու ընթացքում հանդիպեցին դժվարությունների: Ներկայացման ընթացքում խոսքը գրագետ էր, հասկանալի, սակայն ձևակերպումներում կային որոշակի թերություններ:

Բլդեյան Մացակը ստացավ <<8>> միավոր: Նա թեմայի ընտրության հարցում ցուցաբերեց ինքնուրույնություն, կարողացավ լիարժեք ընկալել իր դերն ու առաջադրանքը: Աշխատում էր հիմնականում ինքնուրույն, համագործակցում էր ընկերների հետ: Նրա աշխատանքը ուներ մասնակի խմբագրման կարիք: Մացակը ներկայացման փուլում ուներ թերություններ՝ կապված սահիկահանդեսը ներկայացնելու հետ: Խոսքը հասկանալի էր, բայց ձևակերպումներում կային էական թերություններ:

Գոզեյան Դավիթը և Օհանյան Աշոտը ստացան «7» միավոր: Նրանք թեմայի ընտրության հարցում դրսևորեցին ակտիվ մասնակցություն, սահմանված նպատակը իրագործելի էր: Ժամանակի բաշխումն ու աղբյուրների ուսումնասիրումը, տեղեկտվության հավագրումը իրականացրին ոչ էական թերություններով: Աշխատանքի մշակումը և ձևավորումը իրականացրին պատշաճ մակարդակով՝ որոշակի թերություններով: Աշխատանքը ամբողջական էր, սակայն ուներ խմբագրման կարիք: Խոսքը հասկանալի էր, սակայն ձևակերպումներում և հիմնավորումներում կային էական թերություններ:

Ֆելիքսը ստացավ «5» միավոր: Ֆելիքսը թեմայի ընտրության հարցում դրսևորեց որոշակի մասնակցություն: Աշխատանքի ընթացքում հաճախ դիմեց օգնության, աշխատանքի մշակումը կատարեց էական թերություններով: Խոսքը կցկտուր էր:

Սուրենը ստացավ <<4>> միավոր: Թեմայի ընտրության հարցում դրսևորեց պասիվ համաձայնություն, նա մշտապես օգնության կարիք ուներ: Թեմայի գլխավոր միտքը չկարողացավ լավ ներկայացնել, խոսքը գրագետ չէր կարողանում ձևակերպել: